

Արասիոս

ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԸ ԱՆՀԱՎԱՍԱՐ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ԵՆ
2009-05-21



Այսպիսի կարծիքի է թե ընդդիմության եւ թե հ/կ-ի ներկայացուցիչը

Երեւանի ավագանու ընտրությունների քարոզարշավի արդեն անցած 19 օրերը բավականին հազեցած էին եթե ոչ ակտիվ կամ ծախսատար քարոզչությամբ, ապա հաստատ տեղի ունեցած տհաճ միջադեպերով՝ Քանաքեռ-Զեյթունում եւ Աջափնյակում կոալիցիոն ուժերի միջեւ բախումներով եւ ընդդիմադիր թեկնածուի ակտիվիստների դեմ Ավանում տեղի ունեցած կրկնակի

հարձակումներով, նաեւ՝ Վարչական եւ Սահմանադրական դատարաններում ընտրական օրենսդրության դրույթների վիճարկման երեք դեպքերով:

Թե ինչպիսի՞ն էր քարոզարշավի անցած փուլը, երեկ գնահատեց առաջիկա ընտրություններին մասնակցող միակ ընդդիմադիր թեկնածուի՝ Հայ ազգային կոնգրեսի համակարգող Լեւոն Զուրաբյանը: Նրա դիտարկմամբ, այսօր Երեւանի ավագանիում տեղեր ստանալուն հավակնող երեք ուժեր կան, որոնք ակտիվ քարոզարշավ են վարում, բայց նրանցից երկուսը՝ ՀՀԿ-ն ու ԲՀԿ-ն, ըստ Լ. Զուրաբյանի, ուղղակի զբաղված են միմյանց միջեւ կրիմինալ «ռազբորկաներով»: «Դա է, ըստ էության, նրանց քարոզարշավը: Քաղաքակիրթ քարոզարշավ՝ ժողովրդավարական մեթոդների կիրառմամբ՝ հանրահավաքներ, թռուցիկների տարածում, նաեւ՝ գաղափարական պայքար, վարում է միայն ՀԱԿ-ը: Այս պարագայում մենք անգամ մեր ընդդիմախոսների նկատմամբ սեւ PR անելու, նրանց կրիմինալ էությունն ի ցույց դնելու կարիքը չունենք, որովհետեւ իրենք դա մեր փոխարեն արդեն շատ լավ անում են՝ միմյանց փոխադարձաբար մխտոնելով»: Ինչ վերաբերում է բուն քարոզարշավին, ապա Լ. Զուրաբյանն ասաց, որ այդ իմաստով Կոնգրեսը իր մրցակիցների համեմատ անհավասար պայմաններում է. «Նախ, մեր լավագույն տղաները, որոնք քարոզարշավի կազմակերպչական փորձ ունեն, բանտերում են: Երկրորդ, թեկնածուների միջեւ քարոզարշավի բացարձակ անհավասար պայմաններ են ստեղծված հեռուստաընկերությունների կողմից: Խոսքը թեկնածուների վճարովի գովազդից դուրս տարվող լուսաբանումների ու քարոզչության մասին է: Հեռուստատեսային եթերը, ընդ որում՝ ամբողջը, ողողված է առանձին թեկնածուների անհամեմատ ավելի շատ ու նաեւ թաքնված քարոզչությամբ: Մյուս կողմից, էլեկտրոնային ՁԼՄ-ներով քարոզչության համար սահմանված գումարի անտրամաբանական բարձր չափը պարզապես կապել է մեր ձեռքերը: Մեզ համար դա դժվար է անել, որովհետեւ հայտնի է, որ այս երկրում ընդդիմության համար քարոզչության նպատակով որեւէ ֆինանսավորում ստանալը ուղղակի բացառված է: Իշխանությունների կողմից անմիջապես պատժամիջոցներ են կիրառվում այն անձանց նկատմամբ, որոնք կարող էին այս կամ այն չափով ֆինանսավորել ընդդիմության քարոզարշավը: Դրա լավագույն օրինակը Խաչիկ Սուքիասյանի սեփականության դեմ ոտնձգություններն են, նաեւ՝ գործարար Վոլոդյա Հովհաննիսյանի բիզնեսը ոչնչացնելը, եւ այսպիսի բազմաթիվ օրինակներ: Բայց անգամ այդ վիճակում մենք կարողանում ենք մեր այլ խնդիրների պարագայում՝ քաղաքատարկյալների հարցեր, մեր ակտիվիստների դեմ հարձակումներ, բավականին ակտիվ քարոզարշավ անցկացնել: Ես վստահ եմ, որ մեր ձայներն արդեն այս պահին բավարար են մեր հաղթանակն ապահովելու համար», - նկատեց Լ. Զուրաբյանը:

ՀՀ ԿԸՀ-ում գրանցված տեղական դիտորդական առաքելություններից մեկը, որն իր 52 դիտորդների միջոցով դիտարկելու է առաջիկա ընտրությունները, «Թրանսփերենսի Ինթերնեյշնլ»

հակակոռուպցիոն կենտրոնն է: Վերջինիս խորհրդի նախագահ Ամալյա Կոստանյանը երեկ «Առավոտի» հետ զրույցում ասաց, թե այդ հ/կ-ն առավելապես թեկնածու ուժերի կողմից ֆինանսական միջոցների կուտակման ու ծախսման դիտարկում է անում եւ դրա արդյունքները, նաեւ ընտրությունների վերաբերյալ իր եզրակացությունը կիրառարակի ընտրություններից հետո հունիսի 1-ին: Այդուհանդերձ, տիկին Կոստանյանը *քարոզարշավի անցած փուլը գնահատեց որպես «շատ անսովոր»*, ինչը կարող է մի քանի հնարավոր պատճառներ ունենալ: «Նախ, եթե համեմատենք 2007-08թթ. խորհրդարանական եւ նախագահական ընտրությունների հետ, ապա այս ընտրությունների *քարոզարշավը բավականին պասիվ է նաեւ ծախսերի տեսանկյունից:* Մենք հենց քարոզարշավի ֆինանսավորման մոնիտորինգն ենք իրականացնում, ու մեզ համար ակնհայտ է, որ շատ փող չի ծախսվում: Պատճառները տարբեր են: Մեկը կարող է այն լինել, որ դա Երեւանի ավագանու առաջին ընտրությունն է, եւ թեկնածուները, թերեւս, կարծում են, որ չարժե դրա վրա շատ փող ծախսել եւ մեծ քարոզարշավ ծավալել: Երկրորդ պատճառը կարող է լինել ֆինանսական ճգնաժամը: Մեր տեղեկություններով, նույնիսկ ընտրակաշառքներ (համենայնդեպս՝ ակտիվորեն) դեռ չեն բաժանվում: Վարչական ռեսուրսներն են ակտիվորեն օգտագործվում, ինչը հատուկ է բոլոր ընտրություններին եւ քարոզարշավներին: Կարելի է ասել, որ *ամենաձոխ քարոզարշավը՝ ֆինանսական եւ տեղեկատվական իմաստներով, իրականացնում է ԲՀԿ-ն, իսկ վարչական ռեսուրսը ամենաշատն օգտագործում է ՀՀԿ-ն:* Իսկ եթե կա վարչական ռեսուրսի օգտագործման հնարավորություն, այդ թվում՝ նաեւ էլեկտրոնային ՁԼՄ-ները, հարկ չկա քարոզարշավի համար մեծ գումարներ ծախսել: Իհարկե, ցավալի է, որ ինչպես անցյալ տարի աշնանը տեղի ունեցած ՏԻՄ ընտրությունների ընթացքում, այս անգամ էլ *քարոզարշավին բնորոշ են բռնության, ուժի գործադրման դեպքերը եւ կրիմինալ միջոցների օգտագործումը:* Ենթադրվում է, որ *ընտրության օրը մոտենալուն գուզահեռ, նաեւ քվեարկության օրը կարող են բռնության դեպքեր արձանագրվել:* Անկախ այն բանից, թե այդ բռնությունները կիրառվում են կոալիցիոն ուժերի միջեւ, թե՛ ընդդիմության դեմ, դրանք անընդունելի են ոչ միայն քարոզարշավի ընթացքում, այլեւ՝ քաղաքական կյանքում», - ասաց տիկին Կոստանյանը:

Խոսելով թեկնածուների համար քարոզարշավի հավասար պայմանների առկայության մասին, հ/կ ղեկավարն ասաց, որ *որոշ թեկնածուներ օգտվում են վարչական եւ մասնավոր ռեսուրսի հնարավորություններից, որոնք ընդդիմությունը, բնականաբար, չունի եւ չի կարող օգտագործել, իսկ դա արդեն անհավասար պայմաններ է ստեղծում թեկնածուների համար:* Ինչ վերաբերում է քարոզարշավի լուսաբանմանը, ապա Ա. Կոստանյանի ասելով, դրա, մասնավորապես՝ հեռուստատեսերի մոնիտորինգը իրականացնում է Երեւանի մամուլի ակումբը: «Բայց մեր նախնական տպավորությունն այն է, որ *մեծ անհավասարություն կա եթերում թեկնածուներին անդրադարձի հաճախականության տեսանկյունից*», - նկատեց հ/կ նախագահը: Ըստ նրա, այսօր *եթերներում, այդ թվում՝ «հանրայինում», շատ ավելի հաճախ երեւում են այն թեկնածուները, որոնք ունեն վարչական եւ մասնավոր հեռուստաընկերությունների ռեսուրսներն իրենց քարոզարշավի համար օգտագործելու հնարավորություն, եւ հավելեց, թե՛ իհարկե, դա եւս անհավասար պայմաններ է ստեղծում թեկնածուների համար:* «Տարբեր վերլուծաբաններ տարբեր մոտեցումներ են ցուցաբերում այս քարոզարշավի վերաբերյալ, բայց համարվում է, որ այս ընտրություններում *այնքան փող չի ծախսվի, որքան ճնշում կա: Այսինքն՝ փողը կծախսվի ավելի շատ ոչ թե ընտրակաշառքի, այլ հանձնաժողովների անդամներին կաշառելու կամ նրանց նկատմամբ ճնշումներ կիրառելու վրա: Նման մտահոգություն կա, եւ դա կարող է լինել այս ընտրությունների յուրահատկություններից մեկը*», - նկատեց հ/կ նախագահը:

Այսուհանդերձ, նա այս ընտրություններում մի լուսավոր կամ դրական բան մատնանշեց. «Մենք մտահոգված էինք, որ ԿԸՀ-ն (օրենքը դա չէր նախատեսում) թեկնածուների հայտարարագրերը ծախսերի մասին, կարող է դժվարությամբ հրապարակել, բայց դրանք ԿԸՀ-ն իր պաշտոնական կայքում, գոնե առայժմ, տեղադրել է»:

ՆԱԻՐԱ ՄԱՄԻԿՈՆՅԱՆ